[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
14	Հունիս	2018 թ.		Ա	0201785319
[4] Մատակարարման ամսաթիվ					
14	Հունիս	2018 թ.		Ճշգրտվող հաշվի	
				Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

Մարիանա Ավետիսյան

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի										
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	2	5	2	7	6	2	4		
[9] Անվանումը	«ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ Հիմնադրամ									
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0	2	5	2	7	6	2	4	/	1
[11] Բանկային տվյալները	Արարարատ բանկ			N 1510002308480100						
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ 17									
[13] Լրացուցիչ տվյալներ										

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի										
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3		
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ									
[17] Բանկային տվյալները	ՀՀՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն			N 900011000834						
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5									
[19] Լրացուցիչ տվյալներ										
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն									
	Լիազորագիր	Համար								
		Ամսաթիվ								

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (քանակաչափը)	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումար	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	դատահոգեբանական փորձաքննություն (գործ 11109818)	հատ	1	32833.33		32833.33	20	6566.67	39400
Ընդամենը						32833.33	X	6566.67	39400

Դուրս գրող՝ HARUTYUNYAN SUSANNA 7314730458

անունը, ազգանունը

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

14/06/2018 10:32:46

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Փորձագետ ճանաչելու մասին

« 24 » մայիսի 2018թ. ք.Երևան

ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Դ.Սարոյանս, վերանայելով վարույթիս թիվ 11109818 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

2018 թվականի մայիսի 4-ին ժամը 00:50-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության օպերատիվ կառավարման կենտրոնից ոստիկանության Շենգավիթի բաժին հաղորդում է ստացվել, որ իրենց է զանգահարել Արման Կարապետյանը և հայտնել է, որ Չարբախի փոսում արյունոտ մարդ կա ընկած, հնարավոր է դանակահարված:

Դեպքի վայրի զննությամբ Երևան քաղաքի Կարմիր բլուր 2-րդ փողոցի թիվ 98 տան դիմաց հայտնաբերվել է Գոռ Տարիելի Գասպարյանի դին՝ կրծքավանդակի, որովայնի և գլխի շրջանում կտրած-ծակած վնասվածքներով:

Փաստի առթիվ 04.05.2018թ-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 11109818 քրեական գործը:

Գ.Գասպարյանը ճանաչվել է որպես տուժող:

04.05.2018թ-ին սպանություն կատարելու կասկածանքով ոստիկանության Շենգավիթի բաժին է բերման ենթարկվել Ռազմիկ Անդրանիկի Հովհաննիսյանը, ով ներկայացվել է Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժին, նույն օրը ժամը՝ 08:20-ին ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանք կատարելու մեջ անմիջականորեն ծագած կասկածանքով ձերբակալվել է:

2018 թվականի մայիսի 05-ին Ռ.Հովհաննիսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդված 1-ին մասով այն բանի համար, որ նա 2018թ մայիսի 4-ին ժամը՝ 00:45-ի սահմաններում, Երևան քաղաքի Շիրակի փողոցի թիվ 62/3 հասցեում գտնվող ավտոլվացման կետի դիմաց, իր ծանոթ Գոռ Տարիելի Գասպարյանի հետ գումարային պարտք ու պահանջի հարցի շուրջ ծագած վիճաբանության ընթացքում, իր ծնողների հասցեներին Գ.Գասպարյանի կողմից ուղղված սեռական բնույթի հայհոյանքներ հնչեցնելու պատճառով, նրան ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ, նախապես իր մոտ եղած սուր ծակող-կտրող առարկայով թվով երեք անգամ հարվածել է Գ.Գասպարյանի կրծքավանդակի ձախ կեսի, գլխի գագաթոծրակային և վերորովայնային շրջաններին, սպանել նրան և դիմել փախուստի:

Առաջադրված մեղադրանքում Ռ.Հովհաննիսյանը իրեն մեղավոր է ճանաչել և այնդել է որպես կասկածյալ տված ցուցմունքը:

Որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը:

08.05.2018թ-ին նշանակվել է ստացիոնար դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ԱՆ «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ Նուբարաշենի կլինիկայի ստացիոնար դատահոգեբուժական հանձնաժողովին և <<Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան>> հիմնադրամի կիրառական հոգեբանության և հոգեբանության ամբիոնների համապատասխան մասնագետներին:

«Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան»-ի կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետից ստացված գրության համաձայն՝ սույն քրեական գործով ստացիոնար դատահոգեբանական և դատահոգեբուժական համալիր փորձաքննության կատարման նպատակով կիրառական հոգեբանության ամբիոնի կողմից որպես փորձագետ ներկայացվել է հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Մարիաննա Սամվելի Ավետիսյանը:

Նկատի ունենալով, որ նշանակված ստացիոնար դտահոգեբանական և դատահոգեբուժական համալիր փորձաքննությունը դատահոգեբանական մասով պետք է կատարվի հոգեբան-փորձագետի մասնակցությամբ, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 55-րդ հոդվածի 3-րդ մասի, 4-րդ մասի 12-րդ կետով, 85-րդ և 249-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Վարույթիս թիվ 11109818 քրեական գործով ստացիոնար դտահոգեբանական և դատահոգեբուժական համալիր փորձաքննության դատահոգեբանական մասով կատարման համար որպես փորձագետ ճանաչել «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան»-ի Կիրառական հոգեբանության ամբիոնի հոգեբան, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Մարիանա Սամվելի Ավետիսյանին:
2. Փորձագետին պարզաբանել ՀՀ քր. դատ. օր-ի 85 հոդվածով նախատեսված փորձագետի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար ՀՀ քր. դատ. օր-ի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՀԿԳ քննիչ՝ **Դ.Սարոյան**

Որոշման մասին ինձ հայտնվել է, միաժամանակ պարզաբանվել է ՀՀ քր. դատ. օր-ի 85 հոդվածով նախատեսված փորձագետի իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացվել եմ ակնհայտ կեղծ եզրակացություն տալու, եզրակացություն տալուց հրաժարվելու համար ՀՀ քր. օր-ի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Փորձագետ՝ ***Մ.Ավետիսյան***

<<29>> 05.2018թ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

փորձաքննություն նշանակելու մասին որոշումը փորձագետին հանձնելու և նրա իրավունքներն ու պարտականությունները պարզաբանելու մասին

«29» մայիսի 2018թ. ք.Երևան

ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ՀԿԳ քննիչ, Դ.Սարոյանս ՀՀ քր. դատ. օր-ի 249 հոդ. պահանջների պահպանմամբ, վարույթումս գտնվող թիվ 11109818 քրեական գործով 24.05.2018թ որոշմամբ փորձագետ ճանաչված Մարիաննա Սամվելի Ավետիսյանին հանձնեցի փորձաքննություն նշանակելու մասին որոշումը և նրան պարզաբանեցի ՀՀ քր. դատ. օր.- ի 85 հոդվածով նախատեսված փորձագետի իրավունքներն ու պարտականությունները:

Միաժամանակ փորձագետ Մ.Ավետիսյանը նախազգուշացվել է ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար ՀՀ քր. օր.- ի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Փորձագետ՝ Մ.Ավետիսյան

ՀԿԳ քննիչ՝ Դ.Սարոյան

Փորձաքննություն նշանակելու մասին որոշման պատճենը ստացա: ՀՀ քր. դատ. օր.-ի 85 հոդվածով նախատեսված փորձագետի պարտականություններն ու իրավունքները քննիչի կողմից ինձ պարզաբանվել են: Ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար ՀՀ քր. օր.-ի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացվել եմ:

ՀՀ քր. օր.-ի 338-րդ հոդվածի բովանդակության հետ ծանոթացել եմ:

Հայտարարություններ չունեմ:

ՓՈՐՁԱԳԵՏ՝ Մ.Ավետիսյան

ՀԿԳ քննիչ՝ Դ.Սարոյան